



## ԳԵՂԱԳՐՈՂ ԼԱՅ ԿԻՆ

Հայկական գրականութիւնն ու գեղարուեստը այնքան էլ հարուստ չէ կին գործիչներով եւ եղածներին էլ մասների վրայ կարելի է համարել : Գեղարուեստադէտ, ճարտար գրիչ — դա հանգուցեալ Տիկ. Մարգարիտ Ալէքսանեանցն է : Ահա ինչ է ասում պ. Ա. Յովհաննիսեանը « Արձագանք » շաբաթաթերթի մէջ (տես Արձագանք 1886 թ. յունիս 8, N<sup>o</sup> 22) . « Այս օրերս մենք առիթ ունեցանք « Աղբիւրի » խմբագրատանը տեսնել Շուշեցի տիկին Մարգարիտ Ալէքսանեանի ձեռագիր աւետարանը . որ նա նուիրել է Էջմիածնի թանգարանին : Աւետարանը զբոլած է չորս տեսակ տպանման ձեռագրով, իւրաքանչիւր աւետարանիչի գրուածը պէս պէս : Ամենանուրբ աչքը անգամ չէ կարող տիկնոջ ձեռագիրը զանազանել տպագրութիւնից, այնքան զգուշութեամբ եւ այնքան հմտութեամբ է գրուած նա ամբողջ հինգ տարուայ ընթացքում : Աւետարանի իւրաքանչիւր գլուխը սկսւում է մեծադիր գլխատառերով, որոնք ներկայացնում են զանազան սուրբ կենդանիներ կամ ձկներ, իսկ

գլուխները միջի փոքր գլխատառերը զարդարուած են նուրբանկար փոքրիկ ծաղիկներով եւ փունջերով : Գլխագիրը գրուած է երեք լեզուով . Հայերէն , Պարսերէն եւ Ռսերէն : Աւետարանի սկզբում շատ գեղեցիկ նկարուած են չորս աւետարանիչները իրանց առանձին առանձին նշանաբաններով , իսկ առաջին գլխից յետոյ՝ Յիսուսը նաւի վերայ , խուժտանի գիւմաց : Բացի այդ նկարներից կայ եւ Շուշի քաղաքի պատկերը , որը նոյնպէս գեղեցիկ կերպով է նկարել աշխատասէր արիւնը : Կան նոյնպէս եւ ուրիշ նկարներ՝ աւետարանի բովանդակութիւնից վերցրած : Մի խօսքով գեղադիր աւետարանը այնչափ հմտութեամբ, զգուշութեամբ եւ նուրբ ճաշակով է սկսուած եւ աւարտուած , որ մարդ մի առանձին զմայլութեամբ է նայում նորա վերայ, ինչպէս կարող է նայել մի չնորհաւոր նկարչի գեղեցիկ նկարի վերայ : Աւետարանը գրուած է գեղեցիկ արծաթեայ ոսկեղօծ կաղմի մէջ , որի երկարութիւնն է 10 վերջոյի , իսկ լայնութիւնը՝ 6 վերջոյի : Կաղմի առաջին երեսում , չորս անկիւններում քանդակուած են չորս աւետարանիչների պատկերները , իսկ մէջ տեղում՝ Մովսէս մարգարէինը : Բայց կաղմը շինուած լինելով Մոսկուայում , Խլեբնիկովի գործարանում , նորա պատկերները քանդակուած են ոչ հայկական , այլ ռուսական եկեղեցական ձևով : Յարգելի արիւնը կաղմի վերայ ծախսել է մօտ 700 ռուբլի : Մեզ հաւատացնում էր « Աղբիւրի » խմբագիրը թէ , իբրեւ , Ֆրանսիացի եւ անդղիացի ճանապարհորդներ քանիցս անգամ այդ ձեռագրի համար արիւն Ալեքսանտրին առաջարկել են մեծ գումար , մինչեւ անգամ մօտ 10,000 ռուբլի : Բայց արիւնը նախագասել է նուիրել իւր աշխատութիւնը էջմիածնի թանգարանին : »

Աս արկնոջ գործերից մէկն է , մնացածը կը տեսնենք յետոյ . կենսագրութեան մէջ (\*) :

S. Մարգարիտը ծնաւ Շուշի քաղաքում 1838 թ. : Հայրը՝ Ումբրի Բէկ Օհանեանց , նշանաւոր կալուածատէր բէկերիցն էր : Շուշում այդ ժամանակ կանանց կրթութեան կեդրոնը կուսանաց անապատն էր , որ գտնուում էր քաղաքի կեդրոնում մի բարձրացած ժայռի վրայ : Այստեղ ուսաւ եւ Մարգարիտը ժամանակին հռչակուած Աքեր կոչուած կոյս եղիւ սաբէթ Սարգսեանի մօտ : Նրա սիրելի առարկան եղել է ձեռագործը , Փոքր հասակում , ազգականների հետ դնալով Տաթեւայ վանքը , այնտեղ նա տեսնում է Հայոց եկեղեցական նրբագործ զոհասները եւ այլ հնուութիւնների շարքում նաեւ Գրիգոր Տաթեւացու հռչակաւոր ձեռագիր Աւետարանը , որ ըստ աւանդութեան Գրիգոր Տաթեւացու քոյրն է գրել : Նրա խնդիրը , այն է լաւ տեսնել այդ գեղեցիկ գրչագիրը , մերժուած

(\*) Կենսագրութիւնը քաղել ենք նրա աշխատանքում « Գեղադիր Ալբում »-ից , ապ. Տփլիս 1891 թ. եւ 1902 թ. Տարադում տպուած մահացուցակից :

է, վանահայրը չի թողլ տալիս առարկելով, որ կինը իրուռուք չունի եկեղեցական սրբութիւնը ձեռքն առնել: Այս մերժումը Մարգարաթ մէջ մի միտք է յղացնում, գրեւ մի աշխարհի աւետարան, եւ այդ նպատակով սկսում է ժողովել հայկական ձեռագիրներ, եւ սկսում է ուսումնասիրել հայկական հին ժողկագրութիւնն ու դեղագրութիւնը, նաեւ ձեռագրական նկարչութիւնը: Չը նայած որ նրա ցանկութիւնը լինում է շարունակել իր ուսումը նոյն կոյսի մօտ, սակայն անյաջող է անցնում, եւ 1851 թ. նրան ամուսնացնում են վաճառական Պետրոս Ալէքսանեանցի հետ, որից յետոյ նա կրկին նոյն օգնութեամբ առաջ է տանում իր սիրած ագարիկան, մինչեւ որ բաւական աւսումնասիրելով, կազմում է գեղագրութեան ակարս եւ 1862 թ. ազգակրում Վնեստիկ ապելու, որի համար Մխիթարեան հայրերից հ. Աթանաղոսեան Երեմեանը մեծ դժուարանքով մի նամակ է գրում եւ ապագրութեան համար էլ պահանջում 6000 ֆրանք: Այս ձեռագիրը աշխատէ էլ մնաց Ս. Ղազարում, որովհետեւ ամուսնու վաճառականական մի ձախորդութիւնը հնար չը թուեց ապելու:

1868 թ. գծագրել է (ծանօթութեանց մէջ յիշած) Կեղաղիւր Ալբուր, որի վերնագիրն է « Հայկական գեղագրութիւն. գծագրեցաւ Մարգարաթ գետերէ Ումրի բեկի Յովհաննէսին. ըստ ամուսնուոյն Ալէքսանեանց »: Առաջին երեսի վրայ նկարուած է Շուշու Նոր թաղը: Այս աւտարի մէջ կան բազմաթիւ ժողկագրեր, ձկնաղբիւր եւ այլն. նկարուած է Ազամ եւ Եւան զրախաում եւ կորուստ գրախաին — արաքսումը, եւ այլ բազմաթիւ նուրբ եւ գեղեցիկ պատկերներ:

Էջմիածնի նուիրում աւետարանը արկնոջ յանձնարարութեամբ պ. Տիգրան Նազարեանցը 1886 թ. յունիս 5-ին Ս. Էջմիածին տարաւ որպէս նուէր Միւսոնօրհնէքի: Կաթողիկոսը, Մակար Ա, մեծ համակրանքով էր ընդունել այդ նուէրը: Կաթողիկոսը օրհնութեան եւ գոհունակութեան մի կոնդակ ուղարկեց արկ. Մարգարաթին, զովում է այդ անդնահատելի աշխատասիրութիւնը եւ հրճւում, որ այս գարունն էլ, երբ կանայք աշխարհային կեանքով են զրոգուած, տակաւին մեր ազգում չեն պակսում նախնեաց արկնանց օրինակ բերող կանայք: Այնուհետեւ յայտնում է. « Ընկալեալ զանդնահատելին քո նուէր պատուական համադասեցաք զայն ի շարս ամենապատուական զարդոց թանկարանի Մայր Աթոռոյս ի տես համայնից աշխուսաց »:

Այս դուրից յետոյ մի աւետարան էլ գրեց, որը նուիրեց Շուշու Ղազանջեցոյց եկեղեցուն: Այսպիսի առկուն աշխատութիւնը բնական է, որ պէտք է ազդէր առողջութեան վրայ: Այդպիսի նուրբ աշխատութիւնը քայքայեց արկնոջ աչքերի առողջութիւնը եւ 1898 թ. աչքացաւով հիւանդացած եկաւ Տիփլիս, ուր պ. Տիգրան Նազարեանի բնակարանում բժշկւում էր եւ շնորհիւ ակնաբոյժ հանգ. Տարսիձէի կարողացաւ

մասամբ վերականգնել իր աչքերի առողջութիւնը եւ վերադարձաւ Շուշի, ուր 1902 թ. մարտ 27-ին վախճանուեցաւ եւ վեհափառ կաթողիկոսի հրամանով նոյն ամսի 30-ին Ս. Գրիգոր Լուսաւորչի տօնին Ղազարջեցոյ եկեղեցու բակում մեծ հանդիսով հողի յանձնուեցաւ Տիկ. Ալէքսանեանը լաւ ծանօթ էր Հայոց կաթողիկոսներին, սկսած Մատթէոսից, եւ համարեա՛ ըստ իր ցանկի ունի օրհնութեան եւ գոհունակութեան կոնդակներ :

Հանդուցեալ տիկ. Մարգարիտ Ալէքսանեանի դժագրած տառերի տեսակները համարեա՛ վերջ չունին, բացի այն որ նա ընդօրինակութիւններով է սովորել, պէտք է տեսլ, որ նա մի շարք գեղեցիկ ծաղկագրերի հեղինակ է: Աւետարանները գրուած են հասարակ տպագրական թանաքով եւ մարդս հազիւ թէ կարողանայ որոշել դա ձեռագիր է թէ տպագիր: Տիկինը այրիանալով, ասում են որ իր ամբողջ կեանքը անց էր կացնում գրելով պարապելով: Եթէ հանգ. տիկինը կրթուէր մի որ եւ է գեղարուեստական ճեմարանում այսպիսի ընդունակութիւնից յետոյ, արգեօք ինչպիսի՞ հրաշքներ պէտք է գործէր գեղարուեստական աշխարհում . . . :

Հ. Տ. ԱՍՏՈՒԱՄԱՍՐԵԱՆԾ



## ԱԻԱԳ-ՍԱՐԿԱՒԱԳՈՒՀԻ ՓԵՓՐՈՆԷ ԽՈՒՐԵԱՆ

Օրուարի 17-ին ի Տէր հանգիաւ եւ երէկ, չաբաթ, ամսոյս 24-ին գերեզման իջաւ Թիֆլիսի կուսանոցի մայրապետ Փեփրոնէ Խուրեան: Հանգուցեալ մայրապետը 90 տարեկան էր եւ մահել էր կուսանոց կօթ տարին դեռ չըլրացած: Մայրապետութեան հինգ տարին այս ջրօրհնէն քին լրացաւ:

Թիֆլիսի կուսանոց անապատը հիմնել են Բէհրութեան իշխանները: Ահա այս մենաստանի պատմութիւնը.

Տասնութերորդ դարու սկզբներում Մելիք Աշխարէզ Բէհրութեան Պարսկաստանում Նոր-Չուղայի կուսանոցի մասին տեղեկանալով, մտադրում է եւ ինքը նման մի մենաստան հիմնել Թիֆլիսում: 1727 թ. տաճիկները Թիֆլիսին տիրապետելով, պատերազմում ընկնում է հերոսաբար իշխան Բէհրութեան եւ մահւան տաղնապում կտակում է իր փափաղն իրագործելու:

Սրա հարազատ որդին Մելիք Աղան Նադր-Շահի հետ Խնդուհերին Նաճեղուց յետոյ հօր կտակը կատարում է: Նոր-Չուղայից հրաւիրում է